# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 23.12.2019թ. N ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-19/43-159-19 ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** « 24 » 01 2020թ.

**ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը**, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար **Ա.Խառատյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և **«ՆԱԼՉԱՋՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ն,** ի դեմս Ընկերության տնօրեն **Կ. Նալչաջյանի,** որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ կողմեր և հիմք ընդունելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության և **«ՆԱԼՉԱՋՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ**-ի միջև 23.12.2019թ. կնքված թիվ **ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-19/43-159-19** ծածկագրով պետական գնման պայմանագրի 3.2 և 8.13 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով ծառայության գնման և վճարման ժամանակացույցերը՝ համաձայն Հավելված 1-ի և Հավելված 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով, նախատեսված ժամկետներում Գնորդին մատուցել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ծառայությունը (այսուհետև՝ ծառայություն), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ծառայությունը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված № 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է 23.12.2019թ. կնքված թիվ **ՀՀ ԷՆ-ԳՀԾՁԲ-19/43-159-19** Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքված են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն** | **«ՆԱԼՉԱՋՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ** |
| Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 | Հասցե՝ ք. Երևան, Արաբկիրի 51-րդ փ. 9ա շենք, բն. 32 |
| Հ/Հ՝ 900011018695 | <<ԻՆԵԿՈԲԱՆԿ>> ՓԲԸ |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Հ/Հ 2052822073771001 |
| ՀՎՀՀ՝ 02698604 | ՀՎՀՀ 00164852 |
| ------------------------ Ա.Խառատյան | ------------------------ Կ. Նալչաջյան |
| (ստորագրություն) Կ.Տ. | (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված 1
«24» 01 2020 թ. կնքված
N 1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հրա-վերով նախատես-ված չափա-բաժնի հա-մարը | Գնում-ների պլանով նախատեսվա ծ միջան-ցիկ ծած-կագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգմ ան (CPV) | Տեխնի-կական բնութագիրը | չափման միա-վորը | Ընդ-հանուր գինը/ ՀՀ դրամ | ընդ հան ուր քան ակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկե տը** |
| 1 | 79531100/503 | Թարգմանչական ծառայությունը ներառում է՝ Գրավոր թարգմանություն մեկ լեզվից մյուսը՝ հայերենից ռուսերեն<br>1. Թարգմանվող և թարգմանված նյութերը (արձանագրություններ, պայմանագրեր, տեխնիկական բնութագրեր) պետք է տրամադրվեն ըստ թարգմանվելիք նյութի ծավալի՝ պատվիրատուի հետ համաձայնեցված ժամկետներում:<br>2. Եթե Պատվիրատուն իր թարգմանչական ծառայությունների շրջանակում ունի որոշակի ընդունված տերմինաբանություն, ապա Կատարողը պարտավոր է թարգմանությունն իրականացնել պահանջվող տերմինաբանության առանձնահատկություններով:<br>3. Գրավոր թարգմանության մեկ էջը պետք է բաղկացած լինի 1800 նիշից (բացատը նիշ չի համարվում), եթե թարգմանված նյութը կազմում է մինչև 1800 նիշ, ապա հաշվարկվում է որպես մեկ էջ: Թարգմանված նյութը ներկայացվում է A4 ֆորմատով, տառերը՝ 12 շրիֆտով: Էջերի լուսանցքները՝ վերևից 20 մմ, ներքևից 20 մմ, աջից 10 մմ և ձախից 30 մմ: Միջտողային միջակայքը՝ 1.5:<br>4.Պատվիրատուն՝ թարգմանվող տեքստը Կատարողին հանձնում է էլեկտրոնային և թղթային տարբերակներով: Կատարողը՝ թարգմանված նյութը Պատվիրատուին հանձնում է էլեկտրոնային և թղթային տարբերակներով:<br>5.Նախատեսվող աշխատանքի ծավալը՝ մինչև 400 էջ:<br>Պատվերները իրականացվում են հեռախոսազանգի և էլեկտրոնային փոստի միջոցով: | դրամ | 480000 | 1 | Մ.Մկրտչյան և Կառա-վարա-կան 3-րդ շենք | I-IV եռամսյակ-ներ |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/Հ՝ 900011018695
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02698604

Ա.Խառատյան
(ստորագրություն) Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

**«ՆԱԼՉԱՋՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Արաբկիրի 51-րդ փ. 9ա շենք, բն. 32
<<ԻՆԵԿՈԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 2052822073771001
ՀՎՀՀ 00164852

Կ. Նալչաջյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 2
«24» 01 2020 թ. կնքված
N 1 ծածկագրով համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Տնտեսագիտական դասակարգում | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | ընդամենը |
| 1 | 79531100/503 | Գրավոր թարգմանության ծառայություններ | 4241 | | 480 000 | 480 000 | 480 000 | 480 000 | 480 000 | 480 000 | 480 000 | 480 000 | 480 000 | 480 000 | 480 000 | 480 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/Հ՝ 900011018695
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02698604

------------------- **Ա.Խառատյան**
(ստորագրություն) Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

**«ՆԱԼՉԱՋՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Արաբկիրի 51-րդ փ. 9ա
շենք, բն. 32
<<ԻՆԵԿՈԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 2052822073771001
ՀՎՀՀ 00164852

------------------- **Կ. Նալչաջյան**
(ստորագրություն) Կ.Տ.